Հաշվետվություն 2008

ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գործունեության

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունն (այսուհետ՝ Նախարարություն) իր հիմնական գործունեությունն իրականացնում է ՀՀ կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի N 550-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության հիման վրա:

Նախարարության 2008 թվականի գործունեության ծրագրային հիմքը կազմել են հետևյալ փաստաթղթերը.

- ✓ ՀՀ նախագահի նախընտրական ծրագիրը,
- ✓ ՀՀ կառավարության ծրագիրը,
- ✓ ՀՀ կառավարության 2008-2012թթ գործունեության միջոցառումների ծրագիրը,
- ✓ ՀՀ կառավարության 2008 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը:

Առաջնորդվելով արդյունավետ կառավարման արդիական սկզբունքներով՝ Նախարարությունը ձեռնարկեց գործունեության միջնաժամկետ ռազմավարական պլանավորման գործելակերպի կիրառումը: Այս համատեքստում ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացավ Նախարարության կողմից մշակված ՀՀ էկոնոմիկայի նախարարության եռամյա ռազմավարությունը (այսուհետ՝ Ռազմավարություն):

Ռազմավարությամբ հստակ ամրագրվեցին 2008-2010 թվականների համար Նախարարության առաքելությունները, ռազմավարական ուղղությունները, հիմնական նպատակները և դրանց իրականացման մարտավարությունները: Հաշվետվողականության և վերահսկելիության ապահովման նպատակով Ռազմավարությամբ սահմանվեցին նաև գործունեության արդյունքների գնահատման քանակական և որակական ցուցիչներ:

Հաշվի առնելով Նախարարության գործունեության ծրագրավորված կազմակերպման վերոնշյալ սկզբունքը՝ Նախարարության 2008 թվականի գործունեության սույն հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն) ներկայացվում է ըստ Ռազմավարությամբ ամրագրված ռազմավարական ուղղությունների և համապատասխան նպատակներին ծառայելու տրամաբանության:

ՀՀ կառավարության 2008 թվականի գործունեության միջոցառումների ծրագրով Նախարարությունը, որպես առաջին կատարող, ունեցել է 17 միջոցառում, և որպես համակատարող՝ 5: Նշված միջոցառումները սահմանված կարգով և ժամկետներում ներկայացվել են ՀՀ կառավարություն և համապատասխան նախարարություններ:

Ռազմավարության նպատակների իրականացման հաջորդ քայլերը արտահայտված են Նախարարության 2009թ-ի 4 գերակա խնդիրների և 26 միջոցառումների ցանկում:

I. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

1. Հասարակության համար ընկալելի տնտեսական քաղաքականության իրականացման նպատակին ուղղված

2008 թվականին Նախարարության գործունեության թափանցիկությունն ապահովելու, տնտեսական քաղաքականությունը հասարակության համար հասանելի և ընկալելի դարձնելու, հանրություն-նախարարություն փոխգործակցության արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ կատարվել են հետևյալ աշխատանքները:

Զանգվածային լրատվության միջոցները (ԶԼՄ) մշտապես տեղեկացվել են Նախարարության կողմից կազմակերպված, Նախարարության մասնակցությամբ կամ հովանավորությամբ անցկացված շուրջ 100 միջոցառումների մասին (համաժողովներ, նիստեր, խորհրդակցություններ, ոլորտային և թեմատիկ քննարկումներ, շնորհանդեսներ, կլոր սեղաններ և այլն), ստացել դրանց վերաբերյալ ամփոփ հաղորդագրություններ, հրավիրվել մասնակցելու և լուսաբանելու դրանք:

Պատրաստվել և ԶԼՄ-ների ներկայացուցիչներին են տրամադրվել շուրջ 200 պաշտոնական հաղորդագրություններ և ամփոփ տեղեկատվություն՝ Նախարարի և Նախարարության ղեկավար կազմի պաշտոնական հանդիպումների, այցերի, Նախարարությունում և Նախարարությունից դուրս կազմակերպված միջոցառումների վերաբերյալ:

Նախարարության ընթացիկ աշխատանքները, մշակվող ծրագրերն ու հայեցակարգերը, ոլորտային առաջնահերթ խնդիրները մեկնաբանելու նպատակով նախաձեռնվել են Նախարարի, ինչպես նաև Նախարարության ղեկավար կազմի շուրջ 500 հարցազրույցներ, մեկնաբանություններ, հեռուստառադիոելույթներ և այլն: Անցկացվել են 32 ասուլիսներ, այդ թվում՝ Նախարարի 17, փոխնախարարների 4, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների 11: Հայաստանյան և օտարերկրյա տպագիր և էլեկտրոնային ԶԼՄ-ներում հրապարակվել և հեռարձակվել են Նախարարի 54 հարցազրույցներ:

Նախարարության կայքէջում հանրային քննարկման են ներկայացվել Նախարարության կողմից մշակված թվով 124 հայեցակարգերի, ռազմավարությունների, ծրագրերի նախագծեր, շնորհանդեսներ:

Միջազգային կառույցների և հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ կազմակերպվել են Նախարարի 7 հանդիպումներ և քննարկումներ՝ համագործակցության նոր, արդյունավետ եղանակներ գտնելու, տնտեսական ուղղվածություն ունեցող հաղորդաշարերի, հետագայում տնտեսական ալիք ստեղծելու հնարավորությունների բացահայտման ուղղությամբ: Լրատվամիջոցներից, անհատ լրագրողներից և լրատվական ակումբներից ստացված հայտերով իրականացվել են 390 հանդիպումներ, տրամադրվել է անհրաժեշտ տեղեկատվություն:

2. Նախարարության կողմից բարձրորակ ծառայությունների մատուցման նպատակին ուղղված

Գիտակցելով, որ բնակչության և յուրաքանչյուր հարկատուի շահերից է բխում, որ իրենց վճարած հարկերն օգտագործվեն խնայողաբար և արդյունավետ, որ յուրաքանչյուր հարկատու ցանկանում է տեսնել այնպիսի պետական կառույցներ, որ նվազագույն ծախսերով կիրականացնեն հասարակության կողմից իրենց առջև դրված խնդիրները՝ կառուցվածքային բարեփոխումների հիմքում դրվեց ճկուն, փոքր և քիչ ծախսատար նախարարություն ստեղծելու գաղափարը, որը նվազագույն ծախսերով լավագույնս կծառայի հասարակության շահերին: Նախարարությունում իրականացված կառավարման բարեփոխումների (կառուցվածքային և համակարգային) արդյունքում ճշգրտվեցին Նախարարության

լիազորությունները և կառուցվածքային ստորաբաժանումները խոշորացվեցին ըստ ոլորտների:

Ռազմավարության գործնական իրագործման իմաստով արդյունավետ մեկնարկել է Նախարարության 2009 թվականի աշխատանքային ծրագրի մշակումը, որը ներառում է բոլոր ստորաբաժանումների տարեկան աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև Նախարարության գործընթացների նկարագրումը:

Նախարարությունում ներդրվում է աշխատանքի կատարողականի գնահատման համակարգ, որը թույլ կտա գնահատել աշխատողի կատարողականը, նրա մասնագիտական և գործարար որակները, հնարավորություն կընձեռի ներդնել աշխատանքի կատարողականի վրա հիմնված պարգևատրման համակարգ:

Ուղղորդված աշխատանքներ են ընթացել կարողությունների զարգացման ուղղությամբ. համապատասխան տեխնիկական աջակցությամբ կներդրվեն տնտեսագիտական հետազոտությունների համար այնպիսի կարևոր գործիքներ, ինչպիսիք են ընդհանուր հավասարակշռության, սիմուլյացիոն մոդելները: Սրանք մեզ թույլ կտան քաղաքականության գնահատման, աճի կանխատեսման, շեղումների բացահայտման և կառուցվածքային տեղաշարժերի վերլուծության գործընթացները կազմակերպել մասնագիտական խոր մակարդակում:

Պետական հատվածի արդիականացման ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակաշրջանում գործարկվեց Նախարարության ներքին էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության “Մալբրի” համակարգը: Այդպիսով՝ Նախարարությունը, ծրագրի պիլոտային հատվածում ներառված ևս երկու պետական կառույցների հետ միասին, դարձավ հայաստանյան առաջին գերատեսչություններից մեկը, որտեղ թղթի շարժը փոխարինվեց միջպաշտոնեական կապ ապահովող էլեկտրոնային համակարգով:

II. ԵՐԿՐՈՐԴ ՍԵՐՆԴԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՆԵՐՔՈ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

3. Կենսունակ տնտեսական աճի ապահովման մեխանիզմների արմատավորման նպատակով

ՀՀ տնտեսության երկարաժամկետ տնտեսական աճի ռազմավարական և մարտավարական պլանավորման գործընթացը ենթադրում է տնտեսագիտական վերլուծությունների և հետազոտությունների իրականացում փաստաթղթերի մշակման փուլում, ինչպես նաև ծրագրային գործընթացների մոնիտորիգ՝ փաստաթղթերի իրականացման փուլում: Այս իմաստով կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Նախարարությունը մասնակցել է ՀՀ կառավարության ծրագրի, ՀՀ կառավարության գործունեության 2008-2012 միջոցառումների ծրագրի մեթոդաբանության և ծրագրի մշակմանը:
- ՀՀ տնտեսության զարգացման հնարավոր սցենարների, կառուցվածքային տեղաշարժերի և երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման առումով մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության դրույթներով նախատեսված ՀՀ էկոնոմիկայի նախարարության

գործունեության ծրագրի» նախագիծը, որտեղ բացահայտված են զարգացման մարտահրավերները, դրանց դիմակայման խնդիրները և լուծման ուղղությունները:

- Մշակվել է Նախարարության եռամյա ռազմավարությունը, որով ամրագրվել են նախարարության առաքելությունները, նպատակները, մարտավարական ուղղությունները, ինչպես նաև ակնկալվող արդյունքների գնահատման սահմանված ցուցիչները 2008-2010թթ համար:
- Կազմվել են Նախարարության 2009 թվականի միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները:

Նախարարությունը ստանձնել է աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի համակարգման գործառույթը: Արդեն իսկ հաստատվել է ՀՀ Կայուն զարգացման ծրագիրը և մշակման ավարտական փուլում է միջոցառումների ծրագիրը: Շուտով պատրաստ կլինեն նաև Նախարարության կողմից մշակվող ծրագրերի մոնիտորինգի մեխանիզմները: Մոնիտորինգը նախատեսվում է իրականացնել առավելագույնս բաց և թափանցիկ՝ ինտերնետ միջավայրում, որը տեսանելի և վերահսկելի կլինի յուրաքանչյուր քաղաքացու համար:

Նախարարությունը համակարգել և ապահովել է Համաշխարհային բանկի հետ համագործակցության շրջանակներում առաջիկա 3-4 տարիներին իրականացվելիք ծրագրերի գնահատումը, առաջնահերթությունների սահմանումը: Առաջին անգամ այս գործընթացն իրականացվել է հստակ մեթոդաբանության համապատասխան: Արդյունքում ձևավորվել է հանրապետության համար առաջնահերթ ծրագրերի փաթեթը, որոնց իրականացման համար Համաշխարհային բանկին ներկայացվել է 1 մլրդ ԱՄՆ դոլարից ավելի վարկային (արտոնյալ և ոչ արտոնյալ) հայտ:

4. Տարածքային տնտեսական զարգացման անհամաչափությունների նվազեցման նպատակով

Տարածքային տնտեսական զարգացման հետագա քաղաքականության մշակման նպատակով Նախարարության կողմից իրականացվել են մի շարք վերլուծություններ և ուսումնասիրություններ:

Մշակվել է ՀՀ Զվարթնոց օդանավակայանի հարակից տարածքում ազատ տնտեսական գոտի ստեղծելու հայեցակարգը, որի իրագործումը կխթանի գյուղատնտեսության ոլորտի զարգացումը, մասնավորապես՝ առավել բարձր մրցունակություն ապահովող և արտահանման կողմնորոշում ունեցող գյուղմթերքների արտադրությունը՝ արտաքին շուկայում հայկական գյուղմթերքի՝ որպես որակյալ ապրանքներ «բրենդի» ստեղծման միջոցով:

Մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել է Գյումրի քաղաքը տեխնոքաղաքի վերակառուցելու հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ցանկը: Գյումրու տեխնոպարկի ձևավորման, հետագա զարգացման ռազմավարության և բիզնես պլանի մշակման նպատակով Նախարարության և ԱՄՆ ՄԶԳ Կրթության զարգացման ակադեմիայի հետ համատեղ ընտրվել են միջազգային և տեղական փորձագետներ: Հայաստան է ժամանել միջազգային փորձագետ Քեվին Թոմփսթոունը Իռլանդիայից, որը տեղական փորձագետների հետ աշխատանքներ է իրականացրել տեխնոպարկի բիզնես մոդելի մշակման և ներկայացման ուղղությամբ:

Նախարարության, Եռաչափ մոդելավորողների հայկական ասոցիացիայի և Հայաստանի ադամանդագործների և ոսկերիչների ասոցիացիայի միջև ստորագրվել է Գյումրիում Եռաչափ մոդելավորման ուսումնական լաբորատորիայի հիմնման վերաբերյալ հուշագիր, որն ուղղված

կլինի Գյումրի քաղաքում եռաչափ մոդելավորման զարգացմանը, կրթական համակարգի բարելավմանը և նոր ծրագրերի հիմնմանը, նոր աշխատատեղերի, աշխատանքային խմբերի և ընկերությունների ստեղծմանը, բիզնես կարողությունների ամրապնդմանը և զարգացմանը, ինչպես նաև գործարար միջավայրի բարելավմանը:

Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի և Հայ Օգնության ֆոնդի հետ համատեղ Նախարարությունն աշխատանքներ է տարել SUN տեխնոլոգիաների լաբորատորիայի ստեղծման ուղղությամբ: 2009 թվականին սարքավորումներով հագեցված լաբորատորիան կսկսի գործել:

5. Միջազգային մակարդակով մրցունակ գործարար և առևտրային պայմանների ապահովման նպատակով

<u>Արտաքին տնտեսական համագործակցություն</u>. Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) շրջանակներում ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված առաջնայնությունների և միջոցառումների իրականացման նպատակով Նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել 2008թ. իրականացվելիք առաջնայնությունների և միջոցառումների մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Այն ՀՀ վարչապետի հանձնարարությամբ ներկայացվել է Եվրոպական կառույցների հետ համագործակցությունը համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը: Նախարարության կողմից պատրաստվել և ՀՀ-ԵՄ Համագործակցության խորհրդի նիստում եվրոպական կողմին է ներկայացվել իրականացված միջոցառումների վերաբերյալ զեկույց:

Եվրոպական կողմից ստացվել են հարցաշարեր Հայաստանին շուկայական տնտեսության կարգավիճակի շնորհման հետ կապված մի շարք հարցերի հստակեցման վերաբերյալ, որոնց պատասխանները ներկայացվել են Եվրոպական Հանձնաժողովին: Ներկայումս եվրոպական կողմը, համաձայն սահմանված ընթացակարգերի, քննարկում է ՀՀ-ին շուկայական տնտեսության կարգավիճակ շնորհելու հարցը: Սպասվում է, որ 2009թ. գարնանը Եվրոպական Հանձնաժողովը կհրապարակի իր վերջնական որոշումը Հայաստանի վերաբերյալ:

Հայաստանը պաշտոնապես դիմել է Եվրոպական Հանձնաժողովին՝ 2009թ. հունվարի 1-ից կայուն զարգացման և արդյունավետ կառավարման համար ԵՄ կողմից տրամադրվող «Արտոնությունների ընդհանրացված համալրված համակարգից» (GSP+) օգտվող երկրների ցանկում ընդգրկվելու համար: 2008թ. դեկտեմբերի 9-ին Եվրոպական Հանձնաժողովը հրապարակել է 2009-2011թթ. համար համակարգում ընդգրկված 16 երկրների ցանկը, որոնց թվում է նաև Հայաստանը: GSP+-ը հնարավորություն է տալիս համակարգից օգտվող երկրներին շուրջ 6400 ապրանքատեսակներ ԵՄ շուկա արտահանել զրոյական կամ զգալիորեն նվազեցված մաքսատուրքերով, ինչը լուրջ խթան կհանդիսանա ԵՄ երկրներ իրականացվող արտահանումների ծավալների մեծացման համար:

ՀՀ-ԵՄ ազատ առևտրի մասին համաձայնագրի ստորագրման հնարավորության ուսումնասիրման նպատակով լեհական CASE կազմակերպությունն իրականացվել է ուսումնասիրություն, հրապարակվել համապատասխան զեկույց:

Եվրոպական կողմը Հայաստանին առաջարկել է քննարկել ամբողջական ազատ առևտրի մասին համաձայնագրի (Deep Free Trade Agreement) ստորագրման հնարավորությունները, ինչն էլ ենթադրում է ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումներ Հայաստանում և համապատապատասխանեցում եվրոպական չափանիշներին: ԵՄ անդամ երկրների կողմից

որոշում է կայացվել 2009թ. սկզբին նախաձեռնել նախապատրաստական աշխատանքներ ՀՀ-ԵՄ ամբողջական ազատ առևտրի մասին համաձայնագրի ստորագրման ուղղությամբ:

2008թ. ընթացքում վավերացվել և ուժի մեջ են մտել. «Միջազգային ցուցահանդեսների մասին» Փարիզյան Կոնվենցիան, «ՀՀ կառավարության և Շվեդիայի Թագավորություն կառավարության միջև ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին» և «ՀՀ կառավարության և Բուլղարիայի Հանրապետության կառավարության միջև տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության հարցերով հայ-բուլղարական միջկառավարական հանձնաժողովի ստեղծման մասին» Համաձայնագրեր, ինչպես նաև «ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև փոխադարձ առևտրում անուղղակի հարկերի գանձման սկզբունքների մասին Համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» և «ՀՀ կառավարության և Ռումինիայի կառավարության միջև ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին Համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» Արձանագրությունները:

Ներպետական համաձայնեցման փուլում են գտնվում. «ՀՀ կառավարության և Լեհաստանի Հանրապետության կառավարության միջև տնտեսական համագործակցության մասին» Համաձայնագիրը և «Սլովակիայի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության և ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության միջև տնտեսական համագործակցության մասին» Փոխըմբռնման Հուշագիրը: Քննարկման փուլում են գտնվում 8 Համաձայնագրեր: Շարունակվել են բանակցությունները «ՀՀ կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջև ազատ առևտրի մասին» Համաձայնագրի նախագծի շուրջ:

2008թ. ընթացքում սահմանված կարգով աշխատանքներ են իրականացվել ԱՊՀ կառույցներին Հայաստանի անդամակցությունից բխող պայմանավորվածությունների կատարման, ինչպես նաև հայ-ամերիկյան (ՀՀ էկոնոմիկայի նախարարի համանախագահությամբ), հայ-իրանական, հայ-վրացական, հայ-հնդկական, հայ-ռումինական, հայ-ղազախական միջկառավարական հանձնաժողովների նիստերի նախապատրաստման և անցկացման, ինչպես նաև 2009թ. ընթացքում ՀՀ էկոնոմիկայի նախարարի համանախագահությամբ կայանալիք հայ-բելառուսական, հայ-ուկրաինական, հայ-եգիպտական և հայ-կատարական միջկառավարական հանձնաժողովների նիստերի նախապատրաստման ուղղությամբ:

<u>Արտաքին առևտուր</u>. Արտաքին առևտրի խթանման նպատակով մշակվել և ստորագրվել են «Մինչև 2010թ. ժամանակահատվածը ՌԴ և ՀՀ միջև երկարատև տնտեսական համագործակցության իրականացման միջոցառումների ծրագիրը» և «ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև փոխադարձ առևտրում անուղղակի հարկերի գանձման սկզբունքների մասին» Արձանագրությունը: Շարունակվել են բանակցությունները Իրանի Իսլամական Հանրապետության առևտրի նախարարության հետ՝ երկու երկրների միջև ազատ առևտրի ռեժիմի սահմանման ուղղությամբ, ԱՊՀ շրջանակներում՝ «Ապրանքների ծագման երկրի որոշման» կանոններում փոփոխություններ կատարելու ուղղությամբ: Նախարարության կողմից մշակվել և ՀՀ ԿԱՊԵԿ են ներկայացվել հայեցակարգային մոտեցումներ մաքսային սահմանի վրա ԱԱՀ-ի գումարների գանձման վերաբերյալ:

Իրականացվել են վերլուծություններ և ուսումնասիրություններ ՀՀ ապրանքային շուկաներում մի շարք կարևորագույն ապրանքների մասով (մասնավորպես՝ բրինձի, կարագի, բուսական յուղի, ցորենի, ալյուրի և շաքարավազի): Ուսումնասիրության ընթացքում վեր է հանվել շուկայում արդյունավետ մրցակցության և շուկա մուտք գործելու արգելքների, ինչպես նաև այդ շուկայում գործող կազմակերպությունների գործելաոճը, առաջարկություններ են

ներկայացվել այդ հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ քաղաքականության ուղղությամբ:

Գործարար միջավայր. Գործարար միջավայրի կատարելագործման նպատակի իրականացման համար 2008 թվականին Նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության կողմից ընդունվել է Հայաստանի գործարար և ներդրումային միջավայրի «Գերազանցության կենտրոն» համազգային նախագծի հայեցակարգը և դրա իրականացմանն ուղղված Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագիրը: Ծրագրով նախանշվել և արդեն իսկ իրականացվում են 10 հիմնական ուղղություններով նախատեսված միջոցառումները:

ՀՀ-ում ներկայումս իրականացվում են նաև տեսչական բարեփոխումներ, որոնց նպատակն է կատարելագործել ՀՀ տեսչական համակարգը և այդպիսով ևս նպաստել երկրում գործարար միջավայրի բարելավմանը:

Ներքին շուկա. 2008 թվականին ՀՀ Ազգային ժողովն ընդունել է Նախարարության կողմից ներկայացված առևտրի և ծառայությունների ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործմանն ուղղված օրենսդրական փաթեթը: Դաշտը բարելավելու նպատակով մշակվել և ՀՀ կառավարություն են ներկայացվել մի շարք օրենքների կիրարկումն ապահովող իրավական ակտեր: Նախարարությունը մշակել է «Հայաստանի Հանրապետությունում միջազգային չափանիշներին համապատասխան սպառողների շահերի պաշտպանության համակարգ ապահովելու» հայեցակարգի նախագիծը:

Կորպորատիվ կառավարում. Նախարարությունը նախաձեռնել է Կորպորատիվ կառավարման կոդի ստեղծումը, որի նպատակն է՝ ակտիվացնել կապիտալի շուկան, խթանել արժեթղթերի շուկայի զարգացումը, ինչի համար պետք է հայտնաբերվեն զարգացմանը խոչընդոտող բոլոր գործոնները և դրանց վերացման համար ձեռնարկվեն միջոցառումներ: Ներկայումս փորձագետներն ի հայտ են բերել Կորպորատիվ կառավարման զարգացմանը խոչընդոտող մի շարք հանգամանքներ, որոնք ուսումնասիրվում են համապատասխան աշխատանքային խմբի կողմից: Բարձրացված հարցերի շուրջ 2009թ. սկզբում նախատեսվում է աշխատանքային խմբի քննարկում:

Պետություն-մասնավոր հատված համագործակցություն. Մշակվել է ՀՀ-ում պետություն-մասնավոր հատվածների համագործակցության հայեցակարգի նախագիծը: ՊՄԳ-ները թույլ են տալիս ծրագրերի ռիսկերը ողջամտորեն կիսել կառավարության և մասնավոր ընկերությունների միջև և մասնավոր կապիտալն ուղղել դեպի ենթակառուցվածքների ոլորտ:

Ստանդարտացում. 2008 թվականի ընթացքում Հայաստանում ընդունվել և գործողության մեջ են դրվել 103 միջազգային ԻՍՕ և 11 եվրոպական ԵՆ ստանդարտներ:

Նախարարությունը նախապատրաստվում է ստանդարտացման բնագավառում իրականացնել արմատական բարեփոխումներ՝ միջազգային նմանատիպ համակարգերի հետ համապատասխանեցման ուղղությամբ: Ավստրալիայից հրավիրվել է մասնագետ, որը վերլուծության է ենթարկել Հայաստանի որակի համակարգը և նախանշել զարգացման ուղղությունները: Ներկայումս աշխատանքներ են տարվում ոլորտի զարգացման հայեցակարգային ուղղությունների մշակման ուղղությամբ:

Համապատասխանության հավաստում. Սահմանված կարգով համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա ապրանքների ցանկը 2008 թվականին կրճատվել է 65-70 տոկոսով, ցանկից հանվել են ստվար քանակությամբ արտադրատեսակներ, որոնց նկատմամբ անվտանգության պահանջները սահմանված են տեխնիկական կանոնակարգերով: Արդյունքում մաքսային սահմանի վրա արտադրանքի

համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա արտադրանքի ցանկում մնացել են առավել «ռիսկային» ապրանքները (մանկական սնունդ, ձուկ, ձկնամթերք):

Նախարարությունը նախապատրաստվում է արմատական բարեփոխումներ իրականացնել նաև համապատասխանության հավաստման բնագավառում: Նախատեսվում է մշակել համապատասխանության հավաստումը կարգավորող ՀՀ նոր օրենք՝ օրենսդրական փոփոխությունների հիմքում շեշտադրումը դնելով համապատասխանության պարտադիր հավաստման նախընտրելի ձևի՝ հայտարարագրման վրա:

Չափումների միասնականության ապահովում. Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ են իրականացվել տարածաշրջանային չափագիտության ինստիտուտների կողմից տրված ազգային էտալոնների կալիբրավորման և չափումների վերաբերյալ սերտիֆիկատների փոխճանաչման ուղղությամբ, ինչը հնարավորություն կտա զգալիորեն պարզեցնել ինչպես չափումների միասնականության ապահովման համակարգում, այնպես էլ, ինչը շատ կարևոր է, համապատասխանության հավաստման բնագավառում (միջազգային ճանաչում ունեցող սերտիֆիկացման մարմինների կողմից տրված սերտիֆիկատների փոխադարձ ճանաչում) իրականացված աշխատանքների արդյունքների փոխադարձ ճանաչումը: Սա կպարզեցնի չափման միջոցների տեսակի հաստատման գործընթացը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ Չափագիտության ազգային ինստիտուտի կազմում ստեղծվել է ստանդարտ նմուշների լաբորատորիա, որը համալրվել է արդիական և գերճշգրիտ սարքավորումներով: Նման ճշտության սարքավորումներով հագեցված լաբորատորիան Հայաստանում և տարածաշրջանում միակն է:

Չափագիտության ազգային ինստիտուտի, ՀՀ Արևի ինստիտուտի և Դուբնայի ինստիտուտի համատեղ ուժերով աշխատանքներ են իրականացվում գերմաքուր նյութերի ուսումնասիրության և դրանց ստեղծման տեխնոլոգիաների ուղղությամբ: Նմանատիպ աշխատանքներն ամբողջ աշխարհում ճանաչված են որպես արդիական պահանջարկ ունեցող և նպաստում են մրցունակ արտադրանքի արտադրմանը:

Համապատասխան որոշման ընդունմամբ չափման միջոցի տեսակի հաստատման աշխատանքներն իրականացվում են չափման միջոցները ներմուծելուց հետո շահագործման և իրացման ժամանակ: Սա խնայում է ներմուծողի ժամանակը և բարձրացնում է իրականացվող աշխատանքների որակը:

Չափագիտության բնագավառում նախատեսվում է «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ նոր օրենքի մշակում, որի հիմքում ընկած են լինելու Միջազգային օրենդրական չափագիտության կազմակերպության (ՄՕՉՄ) ուղեցույցները, ինչպես նաև միջազգային և եվրամիության որոշ երկրների լավագույն փորձը:

III. Տնտեսության մեջ արտադրողականության բարձրացում և ավելի բարձր ավելացված արժեքի ստեղծում

6. Մրցունակ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ձևավորման, տեղեկատվական հասարակության կայացման նպատակների ուղղությամբ

Տեղեկատվական տեխլոգիաների ոլորտ. 2008 թվականին ՀՀ Կառավարության հավանությանն արժանացավ «Տեղեկատական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման հայեցակարգը», որի նպատակն է խթանել երկրում տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) կտրուկ զարգացումը՝ ապահովելով աշխարհում Հայաստանի առաջատար դիրքն ու երկրում տեղեկատվական հասարակության կայացումը:

ՀՀ վարչապետի բարձր հովանու ներքո իրականացվել է «Տեղեկատվական տեխնոլոգիաների ամիս» խորագրով միջոցառումների շարքը. Cornet ՓԲԸ կողմից WiMax անլար ցանցի պաշտոնական գործարկումը և բացումը Հայաստանում, «Սինոփսիս-ի շաբաթ» միջոցառումների շարքը, օլիմպիադաներ, սեմինարներ, համաժողովներ, մրցույթներ և այլն:

Համաշխարհային Բանկի հետ Նախարարության բանակցությունների արդյունքում բանկը 2009 թվականին կտրամադրի Քաղաքականության և մարդկային ռեսուրսների զարգացման խոշորածավալ դրամաշնորհ (PHRD)՝ ուղղած 3 հիմնական ուղղությունների զարգացմանը. ենթակառուցվածք, բովանդակություն և նորարարություն:

ՏՏ ոլորտի զարգացման պետական աջակցության 2008 թվականի ծրագրի շրջանակներում Նախարարության կողմից համաֆինանսավորվել են մի շարք ծրագրեր: Մասնավորապես.

Ապահովվել է Հայաստանի մասնակցությունը «ՏՀՏ և զարգացման գլոբալ ալյանսի» կառավարման խորհրդի ամենամյա նիստին Մալազիայում, որտեղ Գլոբալ ալյանսի ղեկավարությունն ու հայկական պատվիրակությունը հանդես եկան համատեղ հայտարարությամբ՝ Հայաստանում ATHGO-ի հետ համատեղ Նորարարության և ունակությունների զարգացման ՏՀՏ երիտասարդական կենտրոն հիմնելու վերաբերյալ:

Հայաստանի՝ ի դեմս հայկական չորս կազմակերպությունների, մասնակցությունը Գերմանիայի Հանովեր քաղաքում տեղի ունեցած CeBIT 2008 աշխարհի խոշորագույն ցուցահանդեսներից մեկին:

Անցկացվել է DigiTec ամենամյա մասնագիտացված ցուցահանդեսի շրջանակներում ԻՏՁՄ կողմից կազմակերպված «Ռոբոտիքս» մրցույթը: Անցկացվել են ArmTech Congress’08 և “Կրթություն և զարգացում” Athgo International համաժողովները:

«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի հետ համատեղ կատարվել է ոլորտի հետազոտություն՝ ներկայացվել է ոլորտի ներկա իրավիճակը, այդ թվում՝ հիմնական խնդիրները և մարտահրավերները, ռազմավարական զարգացման հեռանկարներն ու վերջին տարիներին գրանցված նվաճումները:

«Գիտության և տեխնոլոգիաների ձեռներեցության ծրագրի (STEP) շրջանակներում «VC» վենչուրային համաժողովի համաֆինանսավորում» ենթամիջոցառման շրջանակում անցկացվել է «Գաղափարից դեպի շուկա» գործնական սեմինար: Հայտարարվել է «Բիզնես համագործակցության աջակցման» մրցույթ, որն ուղղված էր մասնավոր ընկերությունների և գիտնականների թիմերի միջև գիտահետազոտական ոլորտում գործընկերության խթանմանը: Կազմակերպվել է Վենչուրային համաժողովի ամփոփիչ կոնֆերանս: Գնահատման արդյունքում՝ ներկայացված ծրագրերի բարձր որակից ելնելով, պլանավորված 3 դրամաշնորհի փոխարեն տրամադրվել է 5 դրամաշնորհ: ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորվել են ՏՏ ոլորտին առնչվող 2 ծրագրերին հատկացվող դրամաշնորհները:

Տեղի ունեցած Մայքրոսոֆթի “Երևակայության գավաթ” ծրագրավորման միջազգային մրցույթի գնահատման արդյունքում իր՝ “Աշխարհի թափոնների շուկա” ծրագրով հաղթած «Ալֆա Սֆեր» թիմը հնարավորություն է ստացել մասնակցելու Փարիզում կայանալիք «Երևակայության գավաթ» «Ծրագրային ապահովման մշակում» (Software Design Invitational) տարեկան միջազգային մրցույթին:

Մայքրոսոֆթի հետ հաստատված 2008-09 փորձնական դասընթացների և ծրագրերի շրջանակներում որպես առաջին աշխատանքային ծրագիր է հանդիսացել Էլեկտրոնային ծառայությունների տրամադրման համակարգը, որի ընթացակարգային և տեխնիկական

պահանջները մանրամասն ուսումնասիրվել և քննարկվել են ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մասնագետների հետ համատեղ, մշակվել են ծրագրային ապահովման լուծումներ:

Հիմնվել են երեք Ուսումնական լաբորատորիաներ՝ Երևանի պետական, Հայ-ռուսական (Սլավոնական) և Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարաններում: Լաբորատորիաներն առաջարկում են 6-ամսյա ֆակուլտատիվ դասընթացներ SUN տեխնոլոգիաների գծով: Լաբորատորիաներում սովորում է 81 ուսանող:

Մշակվում է հայկական SS ոլորտի վիճակագրական (տվյալների հավաքագրման, ճշգրտման և մշակման) նոր համակարգը, որը կներդրվի Նախարարությունում: Ծրագրի շրջանակում, SS ոլորտի, Նախարարության և ՀՀ ազգային վիճակագրական ծառայության մասնագետների հետ համատեղ, մշակվել են խնդրի լուծման մոտեցումները: Համակարգչային ծրագիրը գտնվում է մշակման վերջին փուլում:

<u>Տեղեկատվական հասարակություն</u>. ՀՀ-ում տեղեկատվական հասարակության կայացման առաջին քայլերից մեկը դիտարկվում է պետության կողմից հասարակությանը և տնտեսվարող սուբյեկտներին մատուցվող ծառայությունները էլեկտրոնային դաշտ բերելը:

Սյունիքի մարզում իրականացվել է հեռահար կրթության ներդրման պիլոտային ծրագիրը՝ Կապանի և հեռավոր մի քանի դպրոցների, ինչպես նաև Շահինյանի անվան Ֆիզմաթ դպրոցի միջև կապ հաստատելու միջոցով. Ֆիզմաթ դպրոցում ընթացող դասին տեսա և ձայնային կապի միջոցով հնարավորություն էր տրվել մասնակցություն ունենալու նաև Սյունիքի համապատասխան դպրոցների աշակերտներին: Փորձարկումից հետո այն դրվեց էլեկտրոնային-հեռահար ուսուցման կենտրոնացված համակարգի ներդրման հայեցակարգի հիմքում:

OMX-ի հետ համատեղ իրականացվող Կենսաթոշակային բարեփոխումների ծրագրի շրջանակներում Հայաստանի ողջ տարածքում կձևավորվի հեռահաղորդակցության արագագործ ենթակառուցվածք, որով բնակչությանը հասանելի կլինեն սոցիալական մի շարք ծառայություններ, այդ թվում՝ առողջապահական:

7. Արդյունաբերության գլոբալ մրցունակության բարձրացման նպատակով

Նախարարության կողմից տնտեսության ճյուղերի զարգացման հետագա քաղաքականության մշակման նպատակով իրականացվել են վերլուծություններ արդյունաբերական ընկերությունների տնտեսական գործունեության ծավալման վերաբերյալ ամենամսյա մոնիտորինգի, առանձին ճյուղերի զարգացման միտումների բացահայտման, ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքի, նախնական մասնագիտական (արհեստագործական) կադրերի պահանջարկի ձևավորման միջազգային փորձի թեմաներով:

<u>Քիմիական արդյունաբերություն.</u> Աշխատանքներ են տարվել քիմիական արդյունաբերության բնագավառում կլաստեր ստեղծելու գաղափարի շուրջ: Պարբերաբար տեղի են ունեցել քննարկումներ, որոնց մասնակցել են հանրապետության նշված ոլորտի արտադրական, գիտական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև անհատ գիտնականներ: Քննարկումների շրջանակներում տեղի են ունեցել այցելություններ ոլորտի առաջատար ընկերություններ, մասնավորապես՝ Վանաձորի «Պրոմոթեյ-Քիմպրոմ» ընկերություն, որի ժամանակ քննարկվել են հանրապետությունում արհեստական կորունդների արտադրության շղթայի ձևավորման խնդիրները և ձեռք են բերվել կոնկրետ պայմանավորվածություններ՝ աշխատանքներն սկսելու ուղղությամբ:

Նախարարությունը ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) հետ համատեղ իրականացնում է հանրապետության քիմիական արդյունաբերության վիճակի ուսումնասիրություն:

Թեթև արդյունաբերություն. Հանրապետության թեթև արդյունաբերության բնագավառի ձեռնարկություններին աջակցելու նպատակով Նախարարության կողմից նախապատրաստված համապատասխան ՀՀ կառավարության որոշումներով կարգավորվել են Սպիտակի «Իդիլ-տեքստիլ» ՍՊ ընկերության «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ներկրված հաստոցների և արտադրությանն անհրաժեշտ այլ պարագաների նկատմամբ և Չարենցավանի «Հոլանի» և Երևանի «Էդ.Հայաս գրուպ» ԲԲ ընկերությունների կողմից «Ժամանակավոր ներուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով ներկրված ապրանքների նկատմամբ կիրառված ժամկետների երկարաձգման հետ կապված խնդիրները: Շրջանառության մեջ է «ՎԿՍ Արմենիա» ՍՊ ընկերության «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժմով ներկրված հաստոցների և արտադրությանն անհրաժեշտ այլ պարագաների նկատմամբ կիրառված ժամկետը երկարաձգելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Նախարարությունն իրականացրել է թեթև արդյունաբերության ոլորտի համաշխարհային զարգացման միտումների բացահայտման վերլուծություն, որը համադրվել է հանրապետությունում ոլորտի զարգացման միտումների հետ, բացահայտվել են հիմնախնդիրները, մշակվել է առաջարկությունների փաթեթ, որը կքննարկվի ոլորտի ընկերությունների հետ:

Ադամանդագործություն. Հայաստանում ադամանդագործության ոլորտում այսօր լիարժեք գործում են միայն 14 ընկերություններ: Չնայած ընկերությունների քանակը նվազել է, սակայն գործող ընկերությունները, շնորհիվ միջազգային ճանաչվածության, վերջին շրջանում կարողանում են ապահովել ադամանդագործության ճյուղի ծավալների աճ:

Հաշվի առնելով համաշխարհային ճգնաժամի սպառնալիքները՝ 2008թ. նոյեմբերի 17-ին Անթվերպենում կայացել է գագաթաժողով, որին մասնակցել են ավելի քան 500 ինչպես արդյունահանման, այնպես էլ վերամշակման ոլորտի ներկայացուցիչներ: Որոշում է կայացվել կրճատել շուկաներին հումքային ալմաստների մատակարարումը՝ գնային անկումից խուսափելու նպատակով:

Նախարարությունն առավել ուշադրություն է դարձնում և կաջակցի այն միջոցառումների իրականացմանը, որոնք ուղղված կլինեն ապահովելու միջազգային շուկաների հասանելիությունը: Այդ համատեքստում առաջնային ենք համարում եռաչափ մոդելավորման դիզայներային կենտրոնի հիմնումը Գյումրիում: ՀՀ-ում Իտալիայի դեսպանի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել աջակցելու հայ-իտալական ոսկերչական և դիզայներական ընկերությունների հետագա համագործակցությանը, մասնավորապես՝ վերջիններիս ներգրավելով Գյումրու տեխնոպարկում: Արդեն իսկ կա համագործակցության արձագանք իտալական «Դիզայնի Եվրոպական ինստիտուտ» ընկերության կողմից:

Նախարարությունը որդեգրել է ոսկեգործության և ադամանդագործության ոլորտում «պետություն–մասնավոր հատված» համագործակցության ուղղությունը: Այդ նպատակով կձևավորվի ոլորտի բարձրագույն մարմին՝ Խորհուրդ և խորհրդին կից գործադիր մարմին, որում կներգրավվեն ոլորտի համահայկական մասնավոր հատվածի և պետական մարմինների ներկայացուցիչներ:

«ԱլՌոսա» ընկերության հետ վարվող բանակցությունների արդյունքում համաձայնություն է ձեռք բերվել՝ իր հաճախորդների ցուցակում ավելացնել հայկական ընկերությունների թիվը: Արդյունքում 10 հայկական ընկերություն հրավեր է ստացել մասնակցելու «ԱլՌոսայում»

կազմակերպվող ուղղակի գնումներին: Զուգահեռաբար «ԱլՌոսա» ընկերությունն առաջարկել է հայկական ընկերություններին գնելու ավելի որակյալ հումք:

2008թ. մարտին ռուսական «Կրիստալ» և հայկական «Դի Սի Էյ» ընկերությունների միջև ստորագրված աղամանդագործության ոլորտում համագործակցության հուշագրի շրջանակներում «Դի Սի Էյ» ընկերության արտադրական հզորություններում արդեն իրականացվում է «Կրիստալ» ընկերությունից ստացված ալմաստների 2 խնբաքանակի մշակումը:

ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանի ԱՄՆ (Լոս Անջելես) և Բելգիա (Անթվերպեն) կատարած այցերի շրջանակում ոլորտի հայ գործարարների հետ հանդիպումների ժամանակ քննարկվել են Հայաստանում ոլորտի զարգացման գործընթացին վերջիններիս ներգրավելու հարցերը:

ՌԴ ֆինանսների նախարարության հետ բանակցություններ են վարվում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման նշանների փոխադարձ ճանաչման ուղղությամբ, ինչը կպարզեցնի Հայաստանից Ռուսաստան ոսկերչական իրերի արտահանման գործընթացը:

Ոլորտի առջև ծագած խնդիրների, մասնավորապես՝ միջազգային շուկայում ստեղծված ճգնաժամային իրավիճակում ոլորտի զարգացումը ապահովելու նպատակով, գործարարների հետ համատեղ, Նախարարությունը մշակել է հայեցակարգի նախագիծ:

<u>Արդիական տեխնոլոգիաների ներմուծման գործընթաց.</u> Նախարարության աջակցությամբ և Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ մեկնարկել է գերմանական «Ֆիխտներ» ընկերության կողմից իրականացվող «Երևան քաղաքում պետական և մասնավոր հատվածների համագործակցության միջոցով կոշտ կենցաղային թափոնների կառավարման ինտեգրված ծրագրի տեխնիկատնտեսական հիմնավորման մշակում» ծրագիրը:

Իրականացվում են ուսումնասիրություններ և քննարկումներ Երևանի համայնքներում և շահագրգիռ նախարարություններում, որոնց արդյունքում 2009թ. հունիս-հուլիսին կներկայացվեն համապատասխան առաջարկություններ:

8. Բարձրարժեք ծառայություններ մատուցող ոլորտների զարգացման նպատակով

2008 թվականին ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացավ Զբոսաշրջության զարգացման հայեցակարգը:

Ամրագրված խնդիրների լուծման նպատակով մշակվել և հաստատվել է 2008-2012թթ. միջոցառումների ցանկը: Նշված միջոցառումներն ուղղված են Հայաստանը կազմակերպված հանգստի կենտրոն դարձնելուն, ինչը Ազգային մրցունակության խորհրդի կողմից հայտարարվել է որպես երկրի տնտեսական զարգացման և մրցունակության ապահովման հիմնական ուղղություններից մեկը:

ՀՀ կառավարության որոշմամբ Ջերմուկ քաղաքը հայտարարվել է զբոսաշրջային կենտրոն, սահմանվել են քաղաքի զարգացման հայեցակարգային նպատակները: Որոշմանը համապատասխան մշակվում է Ջերմուկ քաղաքի ռազմավարական ծրագիրը:

Համագործակցությամբ ՄԱԿ Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության, այլ միջազգային կառույցների, տեղական ինքնակառավարման մարմինների և մասնավոր հատվածի շահագրգիռ կողմերի հետ իրականացվում են աշխատանքներ Հայաստանի համայնքներում զբոսաշրջության զարգացման ծրագրի ուղղությամբ:

Ուսումնասիրվել են Գառնի-Գեղարդ երթուղու հիմնախնդիրները, դրանց լուծմանն ուղղված միջոցառումների ցանկը ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը:

Շարունակվել է Հայաստանը ներկայացնող հոլովակների հեռարձակումը CNN և EuroNews հեռուստաալիքներով: Ավարտվել են Հայաստանը ներկայացնող 1 ժամ տևողությամբ ֆիլմի նկարահանումները:

Շարունակվում է «Ծաղկաձորը միջազգային չափանիշներին համապատասխանող զբոսաշրության կենտրոն» նպատակային խնդիրների լուծման ծրագրի իրականացումը և մասնակցությունը Եվրոմիության կողմից ղեկավարվող «Կիևյան նախաձեռնություն» ծրագրի շրջանակներում իրականացվող «Մշակութային զբոսաշրջություն և գինու ճանապարհ» ծրագրի աշխատանքներին:

Որակավորվել են 6 հյուրանոցներ, լիցենզավորվել են 154 զբոսավարներ և 3 ուղեկցորդներ:

2008թ. Հայաստանը մասնակցել է “Vakantiebeurs 2008”- Ուտրեխտ, “BIT2008” - Միլան, “ITB 2008”- Բեռլին, “MAP 2008”- Փարիզ, “JATA 2008”- Տոկիո միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին:

Նախարարությունն 2008 թվականից անդամակցել է Ասիայի և Խաղաղօվկիանոսյան Տարածաշրջանում Զբոսաշրջության Ոլորտում Կրթական և Վերապատրաստման Հաստատությունների Միությանը (APETIT):

9. Գիտելիքի վրա հիմնված տնտեսության ենթակառուցվածքների ձևավորման նպատակով

Նախարարության կողմից մշակվել է «Գիտելիքի տնտեսության ձևավորման հայեցակարգի» նախագիծը: Իրականացվել է հենանիշային ուսումնասիրություն՝ նպատակ ունենալով այլ երկրների կողմից կիրառվող քաղաքականությունների համեմատության միջոցով բացահայտել Հայաստանի համար ամենաարդյունավետ և իրագործելի քաղաքական մոտեցումները: Որպես ռազմավարական ուղղություններ դիտարկվել են գիտելիքահենք տնտեսության հիմնասյունները հանդիսացող գիտական հետազոտությունների և մշակումների, կրթության, նորարարության և տեղեկատվական ու հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտները և դրանց առաջնահերթ զարգացումը:

Գիտելիքահենք տնտեսության կայացման կարևոր նախապայման է նրա ենթակառույցների զարգացումը՝ համակողմանի աջակցությունն ակտիվ աշխատող հետազոտական կազմակերպություններին: Այս ուղղությամբ Նախարարությունը ՀՀ կառավարություն է ներկայացրել Ա.Ի.Ալիխանյանի անվան Երևանի ֆիզիկայի ինստիտուտում CICLONE-30 իզոտոպների արտադրության համալիրի տեղադրման և Հայաստանում Միջուկային բժշկության կենտրոնի ստեղծմանն աջակցելու ծրագիր: Կազմվում է նախագծի իրականացման բիզնես-ծրագիրը՝ Նախարարության աջակցությամբ ներգրավված միջազգային կազմակերպության փորձագետի մասնակցությամբ: Արագացուցիչների կիրառմամբ նոր տեխնոլոգիաների ներդրումը բժշկության մեջ և հարակից բնագավառներում հնարավորություն կտա Հայաստանը դարձնել Միջուկային բժշկության կենտրոն, որը կլինի միակը տարածաշրջանում ռադիոնուկլիդների արտադրության, արտահանման և դրանց հիման վրա բժշկական ախտորոշման ու բուժման բնագավառում:

Նախարարության առանձնացված ստորաբաժանումների գործունեությունը

<u>Մտավոր սեփականության պաշտպանության բնագավառում</u>. 2008թ. ընթացքում ներկայացվել է 230 գյուտի և 9 օգտակար մոդելի հայտ: 199 հայտով անցկացվել է նախնական փորձաքննություն: Գործավարությունն ավարտվել է 147 հայտով:

Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Միջազգային բյուրո (ԺՆև) առաքվել է 5 միջազգային հայտ: Եվրասիական արտոնագրային կոնվենցիայի ընթացակարգով ազգային հայտատուների կողմից ներկայացվել է գյուտի 2 հայտ:

Ապրանքային նշանների 1385 հայտով կատարվել է նախնական փորձաքննություն: Գրանցվել են 1188 ապրանքային և սպասարկման նշաններ: Ստացվել է արդյունաբերական նմուշի 24 հայտ: Տրվել է արդյունաբերական նմուշի 13 արտոնագիր: Գրանցվել է 3988 ֆիրմային անվանում: Քննարկվել և գրանցվել են 85 պայմանագրեր, որոնցից 60-ը՝ ապ-րանքային նշանների զիջման մասին, 20-ը՝ ապրանքային նշանների օգտագործման լիցենզիա տալու մասին, 4-ը՝ գյուտի արտոնագրի զիջման մասին, 1-ը՝ արտոնագրային հասարակ լիցենզիա տալու մասին:

2008 թվականին Մտավոր սեփականության գործակալության կողմից իրականացվող գործողությունների համար 289639,3 հազ. դրամ է մուտքագրվել պետական բյուջե:

<u>Հավատարմագրման գործընթաց</u>. Հավատարմագրման գործակալությունը 2008 թվականին կատարել է 26 փորձարկման լաբորատորիաների և 10 սերտիֆիկացման մարմինների հավատարմագրման նպատակով ներկայացված փաստաթղթերի փորձաքննություն և կազմակերպել դրանց համապատասխանության գնահատման աշխատանքներ:

Գործակալության ներկայացմամբ հավատարմագրվել են 1 սերտիֆիկացման մարմին և 7 փորձարկման լաբորատորիաներ:

Եվրոպական և միջազգային հավատարմագրման կազմակերպություններին անդամակցելու նպատակով վարվել են բանակցություններ: Միաժամանակ, բանակցություններ են վարվել Ռուսաստանյան Գործակալության հետ հավատարմագրման գործակալությունում ԻՍՕ 9001 միջազգային ստանդարտի պահանջներին համապատասխան որակի կառավարման համակարգի ներդրմանն ուղղված խորհրդատվական ծառայություններ ստանալու համար:

<u>Շուկայի վերահսկողություն և սպառողների շահերի պաշտպանություն</u>. 2008 թվականի ընթացքում տեսչության կողմից տեխնիկական կանոնակարգերի պահանջների և չափագիտական կանոնների ու նորմերի պահպանման պետական վերահսկողություն է իրականացվել 218 տնտեսավարող սուբյեկտներում, 59-ում հայտնաբերվել են 68 խախտումներ:

Պետական վերահսկողության արդյունքների հիման վրա 13 տնտեսավարող սուբյեկտների տրվել են կարգադրագրեր տեխնիկական կանոնակարգերի պահանջներին չհամապատասխանող արտադրանքի իրացումը կասեցնելու մասին, 8 տնտեսավարող սուբյեկտների տրվել են կարգադրագրեր չստուգաչափված չափման միջոցների շահագործումը արգելելու մասին: Խախտումներ թույլ տված պատասխանատու անձանց նկատմամբ կիրառվել են վարչական տուգանքներ 6 420 000 դրամի չափով:

<u>Ծրագրերի կառավարման գործընթաց</u>. Հաշվետու տարում Նախարարությանը փոխանցվել են ԵՀԳԳ ներքո իրականացվելիք Թվիննինգ, Թայեքս, Սիգմա և այլ գործիքների ծրագրային առաջարկների մշակման և հաստատված ծրագրերի իրականացման աշխատանքների կազմակերպման ու համակարգման գործառույթները:

Վերոնշյալ ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ պետական կառավարման մարմիններում նշանակվել են մոտ 37 պատասխանատու աշխատակիցներ, որոնք համակարգելու են ծրագրերի իրականացումը տվյալ մարմիններում:

Հավելված 1

2008թ. իրականացված ՀՀ պետական բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորումը (հազ. դրամ)

Ծրագրի անվանումը	Նախատեսված ֆինանսավորում	Փաստացի ֆինանսավորում	Շեղման մեկնաբանում
• Նախարարության աշխատակազմի պահպանման ծախսեր	580212.1	574467.54	Տնտեսում
• Նախարարի աշխատակազմի պահպանման ծախսեր	61519.7	59852.84	Տնտեսում
• Գիտատեխնիկական գրադարանին պետական աջակցություն	117814.7	117365.5	
• Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցություն	450000.0	450000.0	
• ՀՀ զբոսաշրջության զարգացման պետական ծրագիր	80000	71000.0	Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպության ցածր գնային առաջարկ
• ՀՀ Կառավարության պահուստային ֆոնդից	486062.94	486062.94	
• Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի կողմից իրականացվող պետպատվեր	41000.0	40996.6	Տնտեսում
• Չափագիտության ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի կողմից իրականացվող պետպատվեր	21500.0	18856.4	Տնտեսում
• ՀՀ 2007թ. տեխնիկական կանոնակարգերի պահանջների և չափագիտական կանոնների ու նորմերի պահպանման վերահսկողության պետական ծրագիր	31000.0	3600.11	Կատարվել է վերաբաշխում ՀՀ կառավարության 30.10.08թ. N 1291-Ն որոշում
• Գիտական և գիտատեխնիկական գործունեություն	380228.7	371009.66	
- գիտության կիրառական հետազոտությունների իրականացման ծրագրի շրջանակներում պետական աջակցություն	219749.1	219749.1	
- ենթակառուցվածքների պահպանման և զարգացման շրջանակներում պետական աջակցություն	160479.6	151260.56	Արտարժույթի փոխարժեքի անկման պատճառով տնտեսվել է
• «Լեռնահանքային ձեռնարկությունների տեխնոլոգիական նախագծման նորմեր մշակելու ծրագիր»	20000.0	-	Կատարվել է վերաբաշխում ՀՀ կառավարության 30.10.08թ. N 1291-Ն որոշում
• Ծաղկաձորը միջազգային չափանիշներին համապատասխանող զբոսաշրջության կենտրոն	170000.0	168306.5	Արտարժույթի փոխարժեքի հետ կապված տնտեսում
• «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ	52000.0	10255.0	Կատարվել է վերաբաշխում ՀՀ կառավարության 28.08.08թ. N 963-Ն որոշում
• Առևտրի համաշխարհային կազմակերպության հետ անդամակցային պարտավորությունների իրականացում	28840.0	28472.75	Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպության ցածր գնային առաջարկ
• Տեղեկատվական տեխնոլոգիաների պատական զարգացման ծրագիր	110000.0	109595.22	Կատարվել է վերաբաշխում ՀՀ կառավարության 30.10.08թ. N 1291-Ն որոշում
• Գյումրու տեխնոպարկի գործունեության իրականացման պետական աջակցության ծրագիր	80000.0	52676.79	Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպության ցածր գնային առաջարկ